Կիրթլենդի տաճարում վերականգնված քահանայության բանալիները

Ուսումնական վարժություն Ա
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 110.11

Մովսեսը վերականգնեց «Իսրայելի հավաքման» բանալիները (Վարդապետություն և Ուխտեր 110.11): Հավաքման բանալիները այդ իշխանությունը կրող սպասավորներին թույլ են տալիս քարոզել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը աշխարհի ժողովուրդներին:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարել է.



Երբ մենք խոսում ենք Իսրայելը վարագույրի երկու կողմերում հավաքելու մասին, իհարկե, նկատի ունենք միսիոներական, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները: Մենք նաև նկատի ունենք հավատ և վկայություն կառուցել նրանց սրտերում, ում հետ ապրում, աշխատում և ծառայում ենք: (Ռասսել Մ. Նելսոն, «Թող Աստված տնօրինի», *Լիահոնա*, նոյեմբեր 2020, 92)

- Ինչպե՞ս կարող եք օգնել ամրացնել հավատքն ու վկայությունն այն մարդկանց սրտերում, որոնց հետ ամեն օր շփվում եք:
- Ձեր կամ ձեր ծանոթի կյանքի վրա ինչպե՞ս է ազդել այն, որ Տերը օգնության է հասնում մեզ միսիոներական աշխատանքի շնորհիվ:

Ուսումնական վարժություն Բ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 110.12

Եղիասը հանձնեց Աբրահամի ավետարանի տնտեսությունը (Վարդապետություն և Ուխտեր 110.12): Սա ներառում է Աբրահամի ուխտի վերականգնումը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է.



Աբրահամի հետ Աստծո կապած ուխտը . . . պարունակում էր խոստումներ, այդ թվում . . . երկրի բոլոր ազգերը կօրհնվեն նրա սերնդի կողմից: . . .

. . . Մենք ստացել ենք սուրբ քահանայությունն ու հավիտենական ավետարանը, ճիշտ այնպես, ինչպես մարդիկ հնում: Մենք ունենք ավետարանի լրիվությունը ստանալու, քահանայության օրհնությունները վայելելու և Աստծո մեծագույն օրհնություններին արժանի լինելու իրավունքը, որը հավերժական կյանքն է: (Ռասսել Մ. Նելսոն, «Ուխտերը», *Լիահոնա,* նոյ. 2011, 87–88)

- Ինչպե՞ս է Տերը օրհնում անհատներին, ընտանիքներին և ժողովուրներին՝ Իր ավետարանի և Իր քահանայության միջոցով:
- Ի՞նչ օրհնություններ եք զգում Տիրոջի կողմից՝ Իր ավետարանի և Իր քահանայության միջոցով:

Ուսումնական վարժություն Գ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 110.13–16

Եղիան վերականգնեց կնքման բանալիները, որոնք ներառում են տաճարում ընտանիքները միասին կնքելու իշխանությունը:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Գարի Ի. Սթիվենսոնը բացատրել է.



Կնքման բանալիները վերականգնվել են Հին Կտակարանի մարգարե Եղիայի կողմից և որոնց շնորհիվ արարողությունները կատարվում են սրբազան տաճարներում: Այդ տաճարներում կատարված արարողությունները թույլ են տալիս անհատներին և ընտանիքներին վերադառնալ մեր երկնային Ծնողների մոտ: (Գարի Ի. Սթիվենսոն, «Որտե՞ղ են քահանայության բանալիները և իշխանությունը», *Լիահոնա* մայիս 2016, 31)

- Ինչպե՞ս է Տերը մեզ օրհնում տաճարային աշխատանքի և կնքումների միջոցով:
- Ինչպե՞ս է Տերը օրհնել կամ ինչպե՞ս կարող է օրհնել ձեզ և ձեր ընտանիքը տաճարային արարողությունների միջոցով:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_393-1